


**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ****ՅԻՍՈՒՍ ՄԵՐ ՏԵՐԸ**

Յիսուսի մասին չատ մը տարբեր բաներ գրուած են Աւետարաններու եւ Նոր Կտակարանի միւս գրութիւններուն մէջ: Յայտնի է որ այս արտայայտութիւնները նոյն տեսակէ չեն. ոմանք ֆիզիզական, ոմանք պատմական կամ մտաւորական իսկ ուրիշներ հոգեւոր են: Անոնք նոյնիսկ Յիսուսի մասին հիմնական գաղափար մը տալու մէջ նոյն արժէքը չունին: Նոր Կտակարանի ընթերցողը իր անհատական ուսումնասիրութիւնովը եւ իր անձնական փորձառութեան լոյսովը պէտք է եզրակացնէ՝ թէ Յիսուսի մասին ըսւածներէն ո՞րոնք էն կարեւորներն են:

Նախկին Եկեղեցիի տեսակէտը այս մասին չատ նշանակալից է: «Այսօրուան Բրիտանոսը» իրենց մտածումին կեդրոնը կը կազմէր: Ամէն օր հաւատացեալներու մէջ զօրաւոր գործեր կը կատարէր եւ Ս. Հոգին կուտար: Յիսուս՝ ա՛լ մարմնով անտեսանելի, զահին վրայ բազմած թաղաւորն էր, եւ եկեղեցին Անոր հոգեւոր իշխանութեան տակ կ'ապրէր: Աւետարանները երկրի վրայ Իր կեանքին եւ վարդապետութեան թանկագին յիշատակներն էին, բայց անոնք միայն յառաջաբաններ էին համբարձումէն վերջ Իր կատարելիք գործերուն եւ սորվեցնելիք ճշմարտութիւններուն պատմութեան: Մեծն

Կոստանդիանոսի ատեն Բրիտանոսայ գրող մը, որ դեռ այս նախնական համոզումը կը պահէր, իր ընդօրինակած մէկ գրչագրին տակ այսպէս կը գրէր. «Դրուած՝ Կիսուս Բրիտանոսի իշխանութեան երեք հարիւրերորդ տարին»:

Մեր տեսակէտը պիտի նկատի առնէ միւս ազգակը: Եթէ մենք սովորած ենք նկատել թէ Բրիտանոսայական պատգամը Յիսուսի երկրային կեանքին արձանագրութենէն կը բաղկանայ, մենք Անոր վարդապետութիւնները, Անոր օրինակը, մարմնացումը, մահը եւ յարութիւնը քրիստոնէական քարոզութեան մեծ նիւթերը պիտի ընենք: Մենք զանոնք պիտի ցուցնենք եւ պիտի բացատրենք իբր հաւատքի հիմը եւ կեանքի չափանիշը, եւ քրիստոնէական կեանքը պիտի ըլլայ կեանք մը՝ որ այս վարդապետութիւններու համեմատ եւ Յիսուսի օրինակին հետեւելով կ'ապրուի: Բայց եթէ մեր անձնական փորձառութիւնը՝ պատմութեան արձանագրութիւններէն անդին այսօրուան հոգեւոր իրականութիւններուն եւ ոյժին կ'առաջնորդէ մեզ, այն ատեն զո՞նքը, ապրող Տէրը մեր ուշագրութեան առարկայ պիտի դարձնենք: Յակոբոսի հետ զԱյն պիտի կոչենք «Փառաց Տէրը». պիտի միանանք Պօղոսի զԱյն կոչելու «Երկնայինը» եւ «Կեանք տուող Հոգին». Պետրոսի պէս պիտի անուանենք զԱյն մեր հոգիներուն «Հովիւր եւ Հսկողը». Եբրայեցւոյ գրուած թուղթին հե-

զինակին պիտի ձայնակցինք ըսելով՝ «Որովհետեւ ինքը միշտ կենդանի է անոնց համար բարեխօս ըլլալու» Յայտնութիւնը գրողին հետ պիտի ըսենք թէ Ան եկեղեցիներու մէջտեղն է և թէ Նա ինքը զուռը կայնած կը վարնէ։ Դրուած է թէ Ան Ստեփաննոսի, Պօղոսի և Յովհաննէսի յայտնուեցաւ և եկեղեցիին Անոր երեւումին կ'սպասէ։ Մենք պէտք է միանանք քրիստոնէական առաջին եւ էն պարզ հաւատոյ հանգանակին. «Յիսուս Տէր է»։ Այս չի կրնար չինուել մէկու մը կողմանէ որ Անոր զրկած Ս. Հոգին չունի։ Ճ. Մէրիլ

ՅՕԴՈՒԱՄՆԵՐ

ՄԻՋԱԶԳԵՅԻՆ ՄԻՍԻՅՆԱՐԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ ՄԷՋ

Ապրիլ 24—Մայիս 6ին Երուսաղէմի Ձիթենեաց լեռան վրայ տեղի ունեցաւ շատ կարեւոր Միսիոնարական համաժողով մը, որուն մասնակցեցան 240 պատուիրակներ, ներկայացնելով 51 տարբեր երկիրներ և 26 միսիոնարական և քրիստոնէական մարմիններ։

Հալէպի մէջ բարերազգութիւնը ունեցանք ներկայութիւնը վայելելու մի քանի Միսիոնարական և քրիստոնէական առաջնորդներու և գործիչներու, որոնք համաժողովին լրանալէն վերջը զէպի իրենց գործի զաշտերը երթալու ատեն Հալէպէ կ'անցնէին։ Ամերիկեան ժողովական Պօրտի քարտուղար Մր. Ի. Րիկզ, Երիցական Պօրտի քարտուղար Տր. Բ. Սփիր, Չինաստանի Ե. Ք. Ընկերութեան քարտուղար Տր. Դ. Եուրի, Շանթունկի Քրիստոնէական Համալսարանէն Տր. Լուէլա Մայնըր, Կ. Պօլսէն Օր. Փըթնի, Մէքսիքացի, Արժանթինցի և Պարագուէի երիտասարդ գործիչներ, եւայլն այցելեցին մեզ՝ իրենց հետ բերելով համաժողովէն նոր կայծ մը մեզ հըրահրելու և տաք շունչ մը մեզի ներշնչելու։ Ապրիլ 13ին Ուերաթ գիշեր, Երուսաղէմի համաժողովին մասին Միս Փըթնի և Մր. Ի. Րիկզ խօսեցան որոնց խօսքերուն մէկ կարճ ամփոփումն է հետեւեալը։

Տասն եւ ութը տարիներ առաջ միսիոնարներ եւ աւետարանչական գործով հետաքրքրուողներ, ըսաւ Միս Փըթնի, հաւաքուեցան Էսթիպուրի մէջ խորհրդակցելու միսիոնարական հարցերու շուրջ։ Այն ատեն կը

խորհէինք թէ բոլոր երկիրները երկու դասակարգերու կը բաժնուին, քրիստոնեայ երկիրներ և Աւետարանը չճանչցողներ։ Այն ատեն շատ քիչ արեւելքցի ներկայացուցիչներ կային։ Բայց հիմա կը խորհինք թէ կատարելապէս քրիստոնեայ երկիր մը չկայ, և շատ մը նորահաստատ եկեղեցիներ կան ոչ-քրիստոնեայ ճանչցուած երկիրներու մէջ։ Հետեւաբար Երուսաղէմի ժողովին մէջ բաւական մեծ թիւով Քրիստոնեայ Արեւելքցիներ կային։ Միս Փըթնի ապա կարճ կերպով յայտնեց Ձիւնացի Տր. Դ. Եուրի ճառը հետեւեալ կերպով. «Այս համաժողովէն երեք թանկագին կէտեր քաղեցի։

1. Նոր հաւատք մը Աստուծոյ մասին։ Երբ մենք վերնայարկի մէջ հաւաքուեցանք և աղօթեցինք, աւելի լաւ հասկցանք թէ Աստուած մեզի ինչ ըսել կ'ուզէր։

2. Միութեան մասին նոր ըմբռնում մը։ Այս համաժողովի գումարումէն առաջ զատ զատ միութիւններ կը կազմէինք, բայց հիմա մէկ միութիւն կը կազմենք։

3. Քրիստոսի պատգամի մասին նոր ըմբռնում մը։ Բոլոր Քրիստոնեաներ կրնան միանալ Քրիստոսի պատգամին մասին։ Ձէ թէ միայն անհատները այլ նաեւ երկիրները պէտք է փոխուին։»

Ապա Եփրատ Գուէճի նախկին նախագահ և Պօրտի քարտուղար Մր. Ի. Րիկզ սաղէս խօսեցաւ հայերէն լեզուով։—

Քրիստոնէական գործը կ'ընդարձակուի, որուն մեծագոյն թշնամին քաղաքակիրթ աշխարհին մէջ կը գտնուի։ Քանի քաղաքակրթութիւնը կը յառաջանայ նիւթապաշտութիւնը այնչափ կ'աւելնայ։ Եթէ այս իրականութիւն մ'է եկեղեցիին պէտք է ամչնայ։ Ներկայիս եկեղեցիին հետաքրքրութեան հորիզոնը շատ նեղ է։ Ահա այս համաշխարհային ժողովին մէջ բոլոր կեանքը իր բազմազան մարզերուն մէջ նկատի առնուեցաւ։ 1) Դործարանի կեանքը, ճարտարարուեստի զարգացումը նկատի առնուեցաւ, և միսիոնարին ձեռքը ուղղեցոյց մը տրուեցաւ այս նիւթին շուրջ։ 2) Յեղային հարցը նկատի առնուեցաւ։ Այսօր սեւամորթը սպիտակամորթին հետ կը մրցի, այս մրցումը ատելութիւն յառաջ կը բերէ սեւամորթին մէջ սպիտակամորթին եկեղեցիին հանդէպ։ 3) Միսիոնարներ

ՀԱՌԱԳԱՅԹՆԵՐ

Տիեզերքը որուն մէջ կը գտնուինք ամէն օր մեզի կ'ընծայէ զարմանահրաշ երևույթներ: Գիտութիւնը իր կատարած նոր նուաճումներով կուզայ մեզ ապահովելու թէ անուպառ գանձեր կան պահուած, որոնց կատարելապէս ծանօթանալէ տակաւին չատ հեռի կը գտնուինք: Այս բոլոր երևույթներուն մէջ թերեւս էն հետաքրքրականը եւ շահեկանը կարգ մը ճառագայթներ են:

1. Բատիումի ճառագայթները: Բատիումը նիւթ մըն է, տարր մըն է որու գիւտը կը պարտինք Տիկ. Քիւրիի, 1896ին: Անոր քանակը բոլոր աշխարհին մէջ ներկայիս հազիւ 200 կրամ է, որուն մէկ կրամը այսօրուան գինով կ'արժէ 15000 Օսմ. ոսկի (մետաղ): Բատիում աներեւակայելի արագութեամբ ելք տեսակ ճառագայթներ կ'արձակէ, որոնք կը կոչուին Ալֆա, Վիթա եւ Կամա ճառագայթներ, որոնց օգտակարութիւնը բժշկութեան մէջ եւ ուրիշ գործնական նպատակներու համար փորձուած իրողութիւն մ'է: Այս ճառագայթները տարբեր լայնութեամբ ալիքներ ունին եւ հետեւաբար տարբեր սաստկութեամբ թափանցելու կարողութիւնով օժտուած են: Բատիումի ճառագայթները զիտական մեծ արժէք ունին, քանզի անոնց միջոցաւ գիտունները կը յուսան հիւլէի մը (էյրլը) կազմութեան եւ անոր մասերը եղող բացասական եւ դրական էլեքտրոններուն մասին տեղեկութիւն քաղել:

2. Ք. Ճառագայթներ որոնք Ռէօնթկէնեան ալ կը կոչուին: Ա'լ հասարակ իրողութիւն մ'է ասոնց գործածութիւնը, մասնաւորապէս բժշկական նպատակներու համար: Ասոնք շատ կը նմանին Բատիումի ճառագայթներուն, բայց վերջիններէն նուազ սաստկութեամբ կը թափանցին առարկաներու մէջէն: Ք. ճառագայթները կարելի է արուեստական միջոցներով արտադրել պէտք եղածին չափ եւ պէտք եղած ատեն, որով Բատիումի ճառագայթներուն պէս անկառավարելի չեն: Գիտունները մինչեւ հիմա կ'աշխատէին Ք. ճառագայթներուն ոյժը սաստկացնել եւ Բատիումի ճառագայթներուն ուժգնութեան հաւասարեցնել: Բայց բոլոր փորձերը ձախողութեամբ վերջացեր էին: Վերջերս յայտնի էլեքտրոնայէտ Տր. Ու. Տ. Քուլիճ հը-

նարած է նոր ճառագայթի խողովակներ, որոնցմով կարելի եղած է Ք. ճառագայթներու ոյժը 900,000 վոլթի հասցնել: Այս կերպով յառաջ եկած ճառագայթներու սաստկութիւնը եւ արագութիւնը կը հաւասարին Բատիումի Վիթա ճառագայթներուն ունեցածին: Երբ այս վերջինները կարծր մետաղէ տախտակի մը զարնել տրուին իբր Ք. ճառագայթներ ետ կը ցուցուին: Ասոնք իրենց կարգին երբ վոլթան աւելցուի Բատիումի Կամա ճառագայթներուն յատկութիւնները կը ցուցնեն: Այս գիւտը շատ կարեւոր է. քանզի շատ աժան կերպով Բատիումի ճառագայթներ գիտուններուն տրամադրելի պիտի ըլլան զիտական եւ գործնական բոլոր նպատակներուն համար:

3) Քօզմիք ճառագայթներ: Յիշուած ճառագայթները արդէն ատենէ մը իվեր ծանօթ են գիտական աշխարհին: Բայց վերջերս Տր. Բալլըթ Ա. Միլիքան զգայացունց եւ յեղաշրջիչ յայտնութիւն մ'ըրաւ՝ երբ գիտական կաճառի մ'առջեւ խօսեցաւ նոր գտնուած ճառագայթներու մասին, որոնց ֆօզմիք անունը կուտար:

Գիտուններուն ծանօթ էր, թէ երկրի մթնոլորտը ելեքտրական հոսանքներուն շատ տկար կերպով կրնայ հաղորդական ըլլալ: Բայց Կոց սենեակի մը կեդրոնը դրուած ելեքտրացոյց անուն ելեքտրականացած գործիքէ մը ելեքտրականութիւնը կամաց կամաց դուրս կը հոսի: Եթէ նոյն գործիքը Ք. ճառագայթներու կամ Բատիումի ճառագայթներուն ենթարկուի ելեքտրականութեան հոսումը աւելի կը սաստկանայ: Ուստի Տր. Բ. Միլիքան ենթադրեց թէ այդ տկար հոսումն ալ ուրիշ ճառագայթներու ազդեցութեան արդիւնքը պէտք է ըլլայ: Միլիքան անմիջապէս ջանաց հետեւեալ երկու հարցումներուն պատասխան տալ: 1) Այս ճառագայթները ո՞րչափ կրնան թափանցել նիւթին մէջ, ո՞րչափ կրնան ծծուիլ նիւթի կողմանէ (եթէ երբեք կան): 2) Երկրի վրայ դիրքի եւ բարձրութեան տարրերութիւնը ի՞նչպէս կը յարաբերի անոնց սաստկութեան հետ: փորձերը ցուցուցին թէ այս ճառագայթները կրնան 50 ոտք խորութեամբ ընկնել կամ վեց ոտք լայն կապարի կտորէ թափանցել: Մինչդեռ էն դժուար Ք. ճառագայթները հազիւ կրնան կէս մատնաչափ կապարէ անցնիլ: Օղապարիկ-

ներու տակը ինքնագիր ելեքտրացոյցներ կա-
խելով փորձեց բարձրութեան յարաբերութիւն-
նը դտնել ճառագայթներու սաստկութեան
հետ: Տեսնուեցաւ թէ քանի օդապարիկը
կը բարձնանար ելեքտրականութեան ելեք-
տրացոյցէ դուրս հոսուժը այնչափ կը սաստ-
կանար. այսինքն քանի ան կը բարձրանար
ֆոզմիֆ ճառագայթներու ոյժն ալ կը սաստկա-
նար: Օդապարիկներէն մէկը կըցած էր մին-
չեւ ինը մզոն վեր բարձրանալ: Այս կը նշա-
նակէր թէ այս ճառագայթները մեր երկրին
մթնոլորտէն դուրս շատ հեռուններէն կուգա-
յին: Բայց ուժակից կուգային: Ահա հոս
յանգուզն ենթադրութիւն մը ըրաւ մեծ դի-
տուէնը, որ յայտնեց թէ բոլոր միջոցը այս ճա-
ռագայթներով լեցուն է, անհուն միջոցի մէջ
նոր հիւլէներ կը կազմուին միշտ թրոսոն և ե-
լեքտրոն մասերուն միանալովը: Ահա այս նոր
հիւլէներու կազմութենէն յառաջ կուգան այս
նոր ճառագայթները: Աշխարհիս վրայ միշտ
անհուն քանակութեամբ հիւլէներ (էթըր)՝
կըսպառին: Ահա այս սպառումին պակասը կը
լրացնեն կարծես այս նորակազմ հիւլէները:
Տր. Բ. Միլիքանի վարկածը մեզ ականատես
ըլլալու կ'առաջնորդէ տիեզերքիս մէջ կա-
տարուող այս նորոգութեան կամ տիեզերքի
վերարարչութեան հիասքանչ գործողութեան:
Քաղեց Տ. Ճ. Ս.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ե. Ք. ԶԱՆԻՑ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՀԱՆԴԵՐՄԻ ՄԷՋ

Երկու Հայ Աւետ. եկեղեցիներու Զանից
Ընկերութիւնները, թուով ութը հատ, հաճե-
լի անակնկալներով գեղեցիկ յիշատակներ ձը-
ղեցին Միութեան տարեկան համագումար
ժողովին եկող բոլոր պատուիրակներուն մըա-
քերուն մէջ: Ծարաթ օր կէսօրէ վերջ, Ապ-
րիլ 14ին, ի պատիւ ժողովականներուն հան-
դէս մը տրուեցաւ Ապրիլի Հայ Աւետ. եկեղե-
ցիի վարի սրահը: Օրիորդները պատիկ բայց
իմաստալից ներկայացում մը տուին, որուն
մէջ Հաճոյք, Գեղեցկութիւն, Երաժշտութիւն
և Համբաւ կուգան երջանկութիւն տալու
տառապողի մը, բայց ի զուր: Ապա Քրիս-
տոնէութիւնը, ներկայացուցած Հաւատքի,
Յոյսի եւ Սիրոյ կողմանէ, կուգայ իր խաչովը

եւ կը խոստանայ իրական երջանկութիւն:
Տառապանքի միջոցաւ երջանկութիւն, այս է
կիանքի խորհուրդը: Յուզիչ էր վերջին տե-
սարանը, երբ Հաճոյք, Գեղեցկութիւն, Երա-
ժշտութիւն եւ Համբաւ խաչին առջեւ ծնրա-
ղիւր դարձի կուգան եւ կը միանան Հաւատ-
քի, Յոյսի եւ Սիրոյ:

Ներկայացումէն վերջ Երուսաղէմի մի-
ջագագային միսիօնարական համաժողովէն վե-
րադարձող Պրադիցի, Մէքսիկոյի և Արժէն-
թինցի երեք երիտասարդ պատուիրակներ
կարճ կերպով խօսեցան իրենց երկիրներուն
եւ այդ տեղի Աւետարանական գործերու մա-
սին:

Հանդէսի երկրորդ մասին մէջ, որ եկե-
ղեցիի սրահին մէջ կատարուեցաւ, Զինացի
մը՝ Տր. Եոզի անուն, խօսեցաւ առաջին ան-
գամ. ապա Տիկ. Արաքսի՝ Փօլատեան գեղե-
ցիկ ճառ մը կարդաց, եւ Մր. Հ. Րիկս եւ Տր.
Ճ. Մէրիլ խօսեցան Ե. Ք. Զանից կարեւո-
րութեան, անոնց գործերուն և չափահասնե-
րուն՝ երիտասարդներու հանդէպ բռնելիք
գիրքերուն մասին: Հանդէսը ուշատեն լմն-
ցաւ եւ բոլոր ժողովականները զոհ եւ լաւ տը-
պաւորութեամբ բաժնուեցան:

ՍՈՒՐԻՈՅ ՀԱՅ ԱԽԵՏԱՐԵՆԿՆ. ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ
ՄԻՈՒԹԵԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԸ
ՀԱՆԴԵՐՄԻ

Հինգշաբթի իրիկուն, Ապրիլ 12ին, Ա-
զիլիյէի Հայ Աւետ. եկեղեցիին մէջ, վեր. Կ,
Յ. Յարութիւնեան Միութեան ժողովին բաց-
ման ճառը կարդաց: Եկեղեցին ժողովրդով
եւ նոր դէմքերով լեցուած էր, որոնք ուշա-
դրութեամբ հետեւեցան խնամեալ և երկա-
րաշունչ գրութեան: (Ասոր ինչպէս նաեւ
ժողովին մէջ կարգացուած միւս ճառերուն
ամփոփումը կը յուսանք տալ նոր Աւետարե-
րի յաջորդ թիւերուն մէջ):

Միութեան Պէյրութի և Հալէպի շրջան-
ներուն 18 եկեղեցիներէն 34 հովիւներ, քա-
րովիչներ եւ պատուիրակներ եւ երեք բնա-
կան անդամներ եկած էին Միութեան ժողո-
վին մասնակցելու: Իսկ համաժողովին մաս-
նակցեցան յիշուածները եւ միսիօնարները
որոնցմով ժողովականներուն թիւը հասաւ 50ի:

Ուրբաթ օր Միութեան զիւանը կազմուե-
ցաւ. վեր. Ե. Հատիտեան Միութեան ժողո-
վին ատենապետ եւ գործադիրի նախագահ

ընտրուեցաւ, իսկ Պատ. Ա., Հատիտեան՝ քարտուղար: Համաժողովի նիստերուն մէջ որոնց կ'ատենապետէր Տր. Ճ. Է. Մէրիլ, եկեղեցիներու և զանազան մարմիններու և ի մէջ ալլոց Նոր Աւետարեբի վարչական—խմբադրական մարմին տեղեկութիւնները կարգացուցան: Տեղեկագրութիւնները ընդհանուր առմամբ քաջալերական էին, կարգ մը եկեղեցիներու մէջ հոգեւոր արթնութեան նշաններ, ինքնապահ ըլլալու յաջող փորձեր, ընկերային և դաստիարակական օգտակար հաւաքոյթներ, երիտասարդներու և պատանիներու մէջ խոստմնալից գործունէութիւններ մեծ ուրախութիւն պատճառեցին: Բայց նիւթական միջոցներու և մարդու պակասութիւնը մեծ արգելքներ եղած էին աւելի արդիւնաւոր գործունէութեան: Գլխաւոր—խանի, Պրիթլասի, Եօզուս օլուպի բեմերը տակաւին հովիւներէ զուրկ են: Անտիոքի, Թարապլուսի, Լաթաքիոյ, Ալէքի, փոքր աւետարանական համայնքները զեռ չեն կազմակերպուած: Տակաւին շատ մը եկեղեցական համայնքներ իրենց սեփական յարմար շէնքեր չունին: Կարգ մը տեղեր դպրոցական և ուսուցչական անհրաժեշտութիւններէ զուրկ կը մնան:

(Շարունակելի)

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՂՕԹՔ

Կիր. Շանիկ կորսնցնելով: Յոլի. 12.23-25:

Ապրիլ մեռնելով, շահիլ կորսնցնելով, բարձրանալ խոնարհելով, յաղթիլ զոհուելով, հոգիներ շահիլ իր անձը ուրանալով, յաւատենական կեանք ունենալ այս կեանքը տալով: Ահա այս է հոգեւոր աշխարհի համար Աստուծոյ օրէնքը: Դուն քու անձիդ համար ընդունա՞ծ ես այս օրէնքը, կ'ապրի՞ս անոր համեմատ:

Աղօթք. Ով Տէր, բաց մեր հոգւոյն աչքերը որ Բեկ տեսնենք. փարատէ՛ մեր խաւարը, Դուն ես լոյսը, կեանքը, առողջութիւն բերողը, խաղաղութիւն և ճշմարտութիւն յայտնողը: Մէրդ մեկ կենդանացուց, հոգեւոր կեանք և արդարութիւն հաղորդեցիր մեզի շնորհէ որ անկեղծ սիրով սիրենք Բեկ: Անուանդ համար, Ամէն,

Բշ. Նեոուս և Ապաշխարութիւն Եզրա. 9.6. 7. 10, 13-15. Աստուծոյ ժողովուրդին փորձառութիւնները պէտք է մեզի ազդու դասեր

ըլլան: Անոնց անյաջողութիւնները պէտք է մեկ արթուն պահեն և յաջողութիւնը մեկ քաջալերեն: Դաս առնենք իր ժողովուրդին հետ վերաբերումէն:

Աղօթք. Փա՛ռք Բեկ Տէր, Ս. Գրոց համար, զանոնք կարգալով, կեանքի համար իմաստութեան, խոհեմութեան, համբերութեան դասեր կը սորվինք: Օգնէ որ ամուր բռնենք և մեր ամեն գործերուն մէջ առաջնորդուինք Ս. խօսքովդ: Յանուն Յիսուսի. Ամէն:

Գշ. Վասանդիւն. Մատթ. 6. 25-34:

Բու գործերուդ մէջ խոհեմ, ճշմարտախոս, աչալուրջ, աշխատասէր եղիր: Այս կեանքի պէտքերուդ համար օրինաւոր սահմանի մէջ կրցածդ ըրէ: Սակայն, Աստուծոյ վստահէ. հոգ մ'ըներ, անուշադիր մի՛ ըլլար, Աստուծոյ թագաւորութիւնը և Անոր արդարութիւնը միտքէդ մի՛ հաներ: Նա ճնճողկները կը պահէ, զաշտի ծագիկները անմահ գեղեցկութիւնով կը հապուեցնէ, քեզ բնաւ պիտի չձգէ:

Աղօթք. Երկնաւոր Հայր, հոգերէ ազատ և խաղաղ սիրտ տուր մեզի, որպէս զի Բեկ և մեր ընկերները սիրենք և ծառայինք ամէնուն: Օգնէ մեկ որ այս աշխարհի մէջ երկինքի կեանք ապրինք: Յիսուսի սիրոյն: Ամէն:

Գշ. Մարդ իր բարեկամներով կը նանցնուի: Մատթ. 7. 15-21:

Ռ՞վ է քու բարեկամդ, որո՞ւ հետ յարաբերելէ երջանկութիւն կ'զգաս: Կեղծաւորները, պոռոտախոսները, պարծենկոտները քեզ կը զրաւեն: Արդարներու, հեղեբու, բարեպաշտներու հետ հաղորդակցիլ կը սիրե՞ս: Սրաիդ խորերուն մէջ Ռ՞վ է բարեկամդ:

Աղօթք. Ամենակարող Տէր, ամէն սիրտ Բու առջեւդ բաց է. ամէն խորհուրդ, ամէն փափաք, ամէն ինչ Բեկի յայտնի է, մաքրէ՛ իմ սիրտս ու շարժառիթներս, որպէսզի Բու բարեկամութիւնդ վայելամ: Ձիւ շարերէն և կեղծաւորներէն հեռի պահէ: Ամէն:

Եշ. Բրիստոս մեր օրինակը. Ա. Պետ. 2. 19-25: Փորձութեանց և նեղութեանց մէջ ուրախ ըլլալ Աստուածային փառքի հաղորդակցութիւն կը յայտնէ, և երախտագէտ ըլլալ Բրիստոսի շնորհաց ներկայութիւնը: Ան որ առօրեայ գործերուն և դժուարութիւններուն մէջ խաղաղ և բարի կեանք մը կ'ապրի, Բրիստոսի հետեւող մըն է:

Աղօթք. Տէր Յիսուս, ինծի աւելի սէր, աւելի անձնութեան տուր որ Բեզի ա'լ աւելի նմանիմ: Ուսուցիր ինձ թէ ուրիշները մխիթարելու համար ինքզինքս ի՞նչպէս կրնամ զոհել: Զիս խորհուրդով խոնարհ, խօսքով հեզ եւ զործով առատաձեռն ըրէ: Ուսուցիր ինձ թէ տալը աւելի լաւ է առնելէ, եւ ծառայելը՝ ծառայութիւն ընելէ: Սիրոյդ համար: Ամէն:

ՈՒՐԲԱԹ. Աստուծոյ հովանաւորութիւնը. Սաղ. 40: Աստուած կը պաշտպանէ եւ կը հովանաւորէ թռչունները, անասունները, ինչո՞ւ զիս չհովանաւորէ, ինչո՞ւ վախճամ թշնամիներէս, ինչո՞ւ չարին դէմ զիս չպահէ: Բանիցս ինքը մեզի ապաստանարան եղած է՞ ինչո՞ւ այս անգամ եւս իրեն չյուսամ:

Աղօթք: Ո՛վ Տէր, պապ, կասկածոս եւ անհաւատ սրտով Բեզի մօտենալէ իմ անձս դուռն պահէ: Տուր որ հաստատ մտքով, անկեղծ եւ Ս. սիրով Բեզ պաշտենք. Ս. Հոգիիդ կրակը մեր սրտերը թող վառէ, թող կենդանացնէ ինչ որ թուլցած է: Ամէն:

ՇԲ. Ինչպէ՞ս պե՞տքս աղօթեմք. Մար. 6. 7-15:

Որդիի մը պէս մօտեցիր Աստուծոյ, Անոր փառքը, Թագաւորութիւնը, կամքը Աղօթքիդ մէջ առաջին տեղը թող բռնեն: Հացի համար Անոր նախախնամութեանը վստահէ, եղբայրդ մի՛ մոռնար, անոր ներելու պատրաստ եղիր, այս ամէնուն համար Ս. Հոգիին օգնութիւնը խնդրել մի՛ մոռնար:

Աղօթք. Ով Յիսուս, օգնէ ինծի որ, աղօթելու մէջ ալ Բու օրինակիդ հետեւիմ: Դուռն ինծի սորվեցուր թէ ի՞նչպէս պէտք է աղօթեմ: Անուանդ համար: Ամէն:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷԶՐ

ԱՆՁՆՈՒԻՐՈՒԹԻՒՆ

Ճշմարիտ քրիստոնէութիւնը Գրիստոսի տպրած կիանքը ապրելն է: Որքա՞ն գեղեցիկ առաքինութիւններով լեցուն կիանք մըն էր Անոր կեանքը. միթէ չա՞րժեիր մասնաւոր խորհրդածութեան նիւթ ընել այդ իտէալ կեանքը, առնել անոր իւրաքանչիւր գեղեցիկ յատկութիւնները ու զործնականացնել զայն մեր կեանքերուն մէջ: Այս փոքր յօդուածով կը փափաքեմ մատնանիչ ընել Յիսուսի անձնութեանը. ի՞նչ մեծ առաքինութիւն մ'է անձնագոհութիւնը. մեր ընկեր արարածներու

զարդացման, բարօրութեան կամ հանգիստին համար զոհել մեր հանգիստը, հաճոյքը ու նոյն իսկ կեանքը: Անձնութեան ի՞նչ զգայացունց օրինակներ կը տեսնուին յաճախ մեծ մարդոց կեանքին մէջ: Հետեւեալ փոքր պատմութիւնը ասոր մէկ օրինակն է:

Յամի Տեառն 1652 էն մինչեւ 1660 ոտակալի պատերազմ մը տեղի ունեցաւ Տանիմարգայի Յրեատրիք Գ. Թագաւորին եւ Շուէտի Կարոլոս Կիւսթավոս Թագաւորին մէջտեղ. այս պատերազմը վերջացաւ Տանիմարգայի յաղթութեամբ: Արիւնահեղ ճակատամարտէ մը վերջն էր, երբ վերաւորեալներուն մէջ՝ պատերազմի դաշտին վրայ կտրիճ Տանիմարգացի զինուոր մը, իր ստացած վերքերուն տաքութեան մէջ փափաքելով քիչ մը զովացընել ինքզինքը, մէջքէն կախուած գարեջուրի շիշին բերանը բացաւ ու զայն իր բերնին մօտեցուց. հազիւ իր շրթները դպչուցած էր շիշին բերնին երբ մահամերձ Շուէտցի վիրաւորի մը տկար պաղատանքի ձայնն առաւ: Ետին դառնալով ըսաւ որ իրեն ալ ունայ մը ըմպելի տայ: Տակաւին գարեջուրէն մէկ ունայ իսկ չառած՝ «Բու կարօտութիւնդ իմինէս մեծ է» ըսաւ աղնիւ զինուորը, իսկոյն ծնրադրեց ինկած թշնամուն մօտ որպէս զի ըմպելին անոր բերանը հոսեցնէ: Յտնկարծ ատրճանակի հարուած մը ստացաւ՝ որը իր աջ ուսոսկըրը ջախջախեց, ու շիշը ձեռքէն գետին ինկաւ: Վատ Շուէտցին իր վերջին շունչովը կ'ուզէր սպաննել իրեն բարիք ընող թշնամին:

«Մրիկայ.» գոչեց Տանիմարգացին, «Ես քեզի բարիք ընել կը ջանամ, ու դուռն զիս կսպաննես, կեցիր որ քեզ պատմեմ: Ես այս ըմպելիքին բոլորը քեզի պիտի խմցնէի, բայց հիմայ միայն կէսը պիտի տամ»: Այս ըսելով նախ ինքը խմեց շիշին կէսը, ու միւս կէսը խմցուց Շուէտցի զինուորին:

Թագաւորը երբ ասիկայ լսեց, իր քովը կանչեց այս աղնիւ զինուորը ու ըսաւ անոր. «Ինչպէ՞ս կ'ըլլայ որ այսքան վատ թշնամի մը կեանքը խնայեցիր»: «Վեհափառ Տէր», պատասխանեց երիտասարդը, «Ես ամենեւին չեմ կրնար մեռնել վիրաւորուած թշնամի մը:»

«Դուռն ազնուական ըլլալու համար ծնած ես» ըսաւ Թագաւորը, եւ ասպիտ ըրաւ զայն իսկոյն:

ՏԵՐՈՋԸ ՁԵՌՔԻՆ ՏԱԿ

Կը պատմուի թէ հին դղեակի մը պատին վրայ տարօրինակ գործիք մը կախուած էր: Ոչ ոք չի տէր անոր գործածութեան կերպը: Անոր թելերը կտրուած եւ փոշիով ծածկուած էին: Զայն տեսողները կը զարմանային թէ ինչ կրնար ըլլալ այդ եւ ինչպէս կը գործածուէր: Եւ ահա որ մը դղեակին դուռը օտարական մը եկաւ եւ սրահը մտաւ: Ան նշմարեց պատէն կախուած սեւ առարկան, վար առաւ զայն, փոշին զգուշութեամբ մաքրեց եւ փափկութեամբ հաստատեց անոր կըտրուած լարերը, որոնք թէպէտ երկար ատենէ ի վեր լուռ՝ անոր ձեռքին հպումովը արթնցան եւ արտադրեցին նուազ մը որ բոլոր սըրտերը սարսեց: Անիկա տէրն էր որ երկայն բացակայութենէ յետոյ նորէն իր դղեակը եկած էր:

Ասիկայ աւանդութիւն մըն է, որուն նշանակութիւնը շատ պարզ է: Ամէն մահկանացուի հոգիին մէջ փոշիապատ եւ կտրուած թելերով հրաշալի քնար մը պահուած է, զոր դեռ Տէրոջը ձեռքը չէ դպած: Ուրախութիւն չկա՞յ քու սրտիդ մէջ, քու հոգւոյդ քնարը լուռ է, արդեօք ուրախ եւ երջանիկ օրերու դադանքը սորված ես:

Եթէ մաքրէր անուշ Յիսուս իմ քնար, եւ իր մատներն այն լարերուն վրայ շարժէր, Ամբողջ աշխարհն լսելու ձայնն պիտ' կենար Այն նուագին զոր մօտն Տէրոջ կ'արթնցնէր:

Յիսուսի բաց քու սիրտդ ա՛մէն առաւօտ եւ թող տուր որ նա ներս մտնէ եւ նորոգէ այն թելերը զոր մեղքը կտրած է, թո՛ղ որ Ան թըրթռայնէ զանոնք իր ճարտար մատներովը եւ զուն բոլոր օրը երջանիկ պիտի ըլլաս: Մենք պատրաստ ենք ուէ օրուան համար՝ երբ Աստուծոյ սիրոյ երգը մեկ սրտերուն մէջ կը թնթրայ:

(ԹԱՐԳ.) Յ. Կ. ՇԷՕՀՄԷԼԵԱՆ

Թիւ 7ը հանելուկին պատասխանն է «Աւտարեր» եւ լուծողներն են:

Կարապետ Տաղիսթանլեան

Թորոս Լոշիաճեան

Ռօյին Գ. Մանուկեան

Ժիրայր Ն. Սարեան

Լուլու Կ. Յարութիւնեան

Ալիս Գ. Մանուկեան

Նուէրը Լ. և Յ. ի կողմէ տրուեցաւ Ժ. Ն. Սարեանի:

Թիւ 8ը հանելուկին պատասխանը.— երեք լուցկիներով հռանկիւն մը շինէ, ապա մնացեալ երեք լուցկիներէն իւրաքանչիւրը շինուած հռանկեան ծայրերը կանգնէ, այնպէս որ կանգնած լուցկիներուն ծայրերը միմեան օդին մէջ:

Լուծողն է Սիրանոյշ Մարդարեան Սէլա-նիք:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Յիսուս Մեր Տերը

ՏՐ. Ճ. ՄԵՐԻԼ

ՅՈՂՈՒԱԾՆԵՐ

Եղեալդիմի Մխիթարեան

Վիշազգային Ժողով

ԹՂԹԱԿԻՅ

Ճառագայթներ

Տ. Ճ. Խ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՂՕԹՔ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ԷՋԸ

ՆՈՐ ԱՒԵՏԱԲԵՐ

Կրօնարարոյական, Գիտական, Կրթա-կան երկշարաթաթերթ:

Արտօնատէր, Վեր. Կ. Յարութիւնեան Պատասխանատու-Տնօրէն, Տ. Ճ. Խրլոբեան՝

ԲԱԺՆԵԳԻՆ

Սուրբոյ համար տարեկան 2 Մէճիտ

Արտասահման » » 1 Տոլար

Հասցէ—

NOR AVEDAPER
BOITE POSTALE 287
ALEP SYRIE